## «ՄԵՂՐՈՒ ՏԲԿ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N«ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-20/5»**

ք.Մեղրի <<27>> հուլիսի 2020թ.

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն >> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Արտյոմ Կարապետյան (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Շինանյութերի և գործիքների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատուցվում է սույն պայմանագրի N1հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ապրանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը,ինչպես նաև 5.3կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատուցված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N1հավելվածով սահմանված պահանջներին,

բ)խախտվել է Ապրանքի մատուցման ժամկետը:

**2.2Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ապրանքի արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝նաև սույն պայմանագրի 5.5կետով նախատեսված տույժը:

**2.3Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5կետով նախատեսված տույժը:

**2.4Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3.ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություն 2օրինակ (Հավելված N3)և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N3.1):

3.2Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում,հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն`

ա)հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում,ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ապրանքը ընդհանուր գինը կազմում է 719450 (յոթ հարյուր տասնինը հազար չորս հարյուր հիսուն ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու,իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ`դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո,ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում,ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն

ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30-ը դեկտեմբերի 2020թ.:

## 5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման` սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք` սույն պայմանագրի 4.1կետում նախատեսված գումարի 0,5(զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2և 5.3կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուին նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք)ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

չկնքելու համար: Ընդ որում,Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի **N 1, N 2, N 3** և **N 3.1** հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ՝ | ՎԱՃԱՌՈՂ՝ |
|---|---|
| "Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ | Ա/Ձ Արտյոմ Կարապետյան |
| ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42 | ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Ա. Խաչատրյանի 6 |
| Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի | Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի |
| Հ/Հ 16099003354200 | Հ/Հ 16099101233900 |
| ՀՎՀՀ 09705024 | ՀՎՀՀ 79510714 |
| Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru | Էլ. Փոստ harsam1976@mail.ru |
| Հեռ.0286-60685 | Հեռ. 093753500 |
| "Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն՝ / / Լ. Վարդանյան | Ա/Ձ / / Ա. Կարապետյան |

Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057
Date: 2020.07.27 11:48:04 GMT+04:00

Digitally signed by KARAPETYAN ARTYOM 2904790225
Date: 2020.07.27 17:40:01 AMST

*Հավելված 1*
*<<_27_>> հուլիսի 2020թ. կնքված*
*N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Տեխնիկական բնութագիրը |
| 1 | 42661100/1 | Պայալնիկ | հատ | 1 | *1500* | 1500 | 220V 60W |
| 2 | 31681900/1 | Էլեկտրական հարվածային դրել | հատ | 1 | *20000* | 20000 | Հզորությունը 800-1200W |
| 3 | 31221230/1 | Կոյուղի բացելու մալուխ (трос) բռնակով 25մ-ոց | հատ | 1 | *1800* | 1800 | բռնակով 25մ-ոց |
| 4 | 42651200/2 | Անկյունային հղկող մեքենա (болгарка) քարի մեծությունը Φ125մմ | հատ | 1 | *17000* | 17000 | 1 քարի մեծությունը Φ125մմ |
| 5 | 44511250/1 | Տափակաբերան աքցան (плоскогубцы) | հատ | 2 | *1200* | 2400 | Տափակաբերան աքցան (плоскогубцы) |
| 6 | 44511371/1 | Բանալիների (ключ) հավաքածու 8-22 | հատ | 1 | *5500* | 5500 | հավաքածու N 8-22 |
| 7 | 42651200/3 | Ցազվա կլյուչ | հատ | 3 | *1800* | 5400 | 180-200մմ |
| 8 | 44511330/1 | Պտուտակահանների (ОТВЁРТКА)հավաքածու | կոմպլեքտ | 2 | *2300* | 4600 | Հավաքածուի քանակը 5-10 |
| 9 | 44423220/1 | Շինարարական աստիճան բացովի 3մ-ոց | հատ | 1 | *15000* | 15000 | բացովի 3մ-ոց |
| 10 | 31521570/1 | Լապտեր ձեռքի ինքնալիցքավորվող 220Վ հոսանքից | հատ | 2 | *1200* | 2400 | ինքնալիցքավորվող 220V հոսանքից |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | 42651200/4 | Մանրասղոց (ножовка) /գործիք/ | հատ | 1 | 1100 | 1100 | 20-30սմ երկարությամբ |
| 12 | 31211210/1 | Տեստեր վոլտմետր ամպերմետր | հատ | 1 | 2600 | 2600 | Տեստեր վոլտմետր ամպերմետր |
| 13 | 44511270/1 | Մուրճ 2 կգ-ոց | հատ | 1 | 1900 | 1900 | 2 կգ-ոց |
| 14 | 44511270/1 | Մուրճ 0.5 կգ-ոց | հատ | 1 | 1200 | 1200 | 0.5 կգ-ոց |
| 15 | 44511200/1 | Սղոց փոքր | հատ | 1 | 1300 | 1300 | Սղոց փոքր |
| 16 | 42651200/5 | Մեխհանիչ մեծ /գվոզդոձեռ/ | հատ | 1 | 3300 | 3300 | Մեխհանիչ մեծ /գվոզդոձեռ/ |
| 17 | 42651200/6 | Մեխհանիչ փոքր /գվոզդոձեռ/ | հատ | 1 | 1800 | 1800 | Մեխհանիչ փոքր /գվոզդոձեռ/ |
| 18 | 44511110/1 | Բահ կոթով ուղիղ | հատ | 4 | 1800 | 7200 | Բահ կոթով ուղիղ |
| 19 | 44511170/1 | Գրաբիլ | զատ | 2 | 1300 | 2600 | Գրաբիլ |
| 20 | 42651200/7 | Ապակի կտրող սարք | հատ | 1 | 800 | 800 | Ապակի կտրող սարք |
| 21 | 44511170/2 | Փոցխ կոթով | հատ | 2 | 1500 | 3000 | Փոցխ կոթով |
| 22 | 44511220/1 | Զոդման խողովակի կտրիչ | հատ | 1 | 1700 | 1700 | Զոդման խողովակի կտրիչ |
| 23 | 14521171/1 | Անկյունային հղկող մեքենայի ( болгарка) քար կտրող Ф115մմ | հատ | 5 | 650 | 3250 | կտրող Ф115մմ |
| 24 | 14521171/2 | Անկյունային հղկող մեքենայի ( болгарка) քար կտրող Ф125մմ | հատ | 5 | 700 | 3500 | կտրող Ф125մմ |
| 25 | 14521171/3 | Անկյունային հղկող մեքենայի ( болгарка) քար տաշող Ф115մմ | հատ | 5 | 900 | 4500 | տաշող Ф115մմ |
| 26 | 14521171/4 | Անկյունային հղկող մեքենայի ( болгарка) քար տաշող Ф125մմ | հատ | 3 | 1000 | 3000 | տաշող Ф125մմ |
| 27 | 44112760/1 | Ծորակի ճկուն խողովակ (гибкий) /որձ+որձ/ 40 սմ մետաղյա | հատ | 30 | 750 | 22500 | /որձ+որձ/ 40 սմ մետաղյա |
| 28 | 31588100/1 | Էլեկտրական վարդակ (розетка) հողանցումով | հատ | 10 | 700 | 7000 | Էլեկտրական վարդակ (розетка) հողանցումով |
| 29 | 31686000/1 | Խրոց (вилка) | հատ | 30 | 350 | 10500 | Խրոց (вилка) |
| 30 | 31321280/1 | Լար պղնձե բազմաջիղ երկշերտ | մետր | 100 | 240 | 24000 | պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 2X2,5 մմ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պաշպանվածությամբ 2X2,5 մմ | | | | | |
| 31 | 31321290/1 | Լար պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 5 մմ | մետր | 15 | *400* | 6000 | պղնձե բազմաջիղ երկշերտ պաշպանվածությամբ 5 մմ |
| 32 | 39132220/1 | Կախիչ երկաթից երկտեղանոց, եռանկյունաձև | հատ | 30 | *200* | 6000 | Երկաթից, երկտեղանոց, եռանկյունաձև |
| 33 | 31681140/1 | Էլկեկտրական հաղորդիչ 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով | հատ | 10 | *550* | 5500 | 3 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով |
| 34 | 31681140/2 | Էլկեկտրական հաղորդիչ 4 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով | հատ | 10 | *800* | 8000 | 4 սարքավորում միացնելու հնարավորությամբ՝ հողանցումով |
| 35 | 44521121/1 | Դռան փականի միջուկ | հատ | 30 | *2400* | 72000 | Դռան փականի միջուկ |
| 36 | 44521121/2 | Ներքին դռան փական | հատ | 10 | *3400* | 34000 | Ներքին դռան փական |
| 37 | 31521150/1 | Կախովի առաստաղի էլ լամպ միջին չափսի 100W | հատ | 40 | *350* | 14000 | միջին չափսի 100W |
| 38 | 31521150/2 | Կախովի առաստաղի LED լամպ Ф 12,5 մմ 11W ռելեով | հատ | 55 | *1400* | 77000 | Ф 12,5 մմ 11W ռելեով |
| 39 | 31221180/1 | Կոթառ էլեկտրոլամպերի (патрон) | հատ | 10 | *200* | 2000 | Կոթառ էլեկտրոլամպերի (патрон) |
| 40 | 31531100/1 | Էլեկտրական լամպեր (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության 100 Վտ | հատ | 300 | *110* | 33000 | (220-230) V լարման, 50 Հց հաճախականության 100 W |
| 41 | 39711330/1 | Էլ տաքացուցիչի ապակիով պարույր 40սմ | հատ | 10 | *400* | 4000 | Էլ տաքացուցիչի ապակիով, 40սմ |
| 42 | 44221141/1 | Դռան պահապան (շվեյցար) 100 կգ-ոց | հատ | 2 | *9500* | 19000 | 100 կգ-ոց |
| 43 | 44521120/1 | Դռան մեխանիկական փական | հատ | 10 | *350* | 3500 | Դռան մեխանիկական փական |
| 44 | 31442100/1 | Մարտկոց /Էլեմենտ/ փոքր | հատ | 30 | *100* | 3000 | Փոքր 1.5V |
| 45 | 31442100/2 | Մարտկոց /Էլեմենտ/ միջին | հատ | 30 | *100* | 3000 | Միջին 1.5V |
| 46 | 44511220/2 | Մանրասղոցի (ножовка) | հատ | 5 | *100* | 500 | 20-30սմ երկարությամբ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | 34921470/1 | Փողոցային լույսերի ԼԵԴ լամպ 60W | հատ | 30 | *1200* | 36000 | 60W |
| 48 | 31221140/1 | Լույսի ռելե լեդ լամպի | հատ | 10 | *700* | 7000 | լեդ լամպի |
| 49 | 44411110/1 | Սառը ջրի վինտիլ պլաստմասսայե կես պտույտ Փ20մմ | հատ | 30 | *1600* | 48000 | պլաստմասսայե ,կես պտույտ Փ20մմ |
| 50 | 44511343/1 | Գայլիկոն (сверло) ալմաստե Փ3մմ-ից 13 մմ | կոմպլեքտ | 1 | *4400* | 4400 | Ալմաստե, Փ3մմ-ից 13 մմ |
| 51 | 44511343/2 | Գայլիկոն (сверло) փայտե Փ3մմ-ից 13 մմ | կոմպլեքտ | 1 | *2100* | 2100 | Փայտե, Փ3մմ-ից 13 մմ |
| 52 | 31651400/1 | Մեկուսիչ ժապավեն (изолент)սովորական | հատ | 20 | *200* | 4000 | 15-20մմ լայնությամբ, 10մ երկարությամբ |
| 53 | 30192231/1 | Սկոչ մեծ | հատ | 15 | *600* | 9000 | Լայնությունը 48-50մմ, թափանցիկ |
| 54 | 24911500/1 | Փչովի սոսինձ ՄԴՖ-ի, փայտի մեծ | հատ | 6 | *2000* | 12000 | ՄԴՖ-ի, փայտի մեծ |
| 55 | 31211180/1 | Հոսանքի ավտոմատ անջատիչ 16 A | հատ | 2 | *1000* | 2000 | 16 A |
| 56 | 31211180/2 | Հոսանքի ավտոմատ անջատիչ 25 A | հատ | 2 | *1200* | 2400 | 25A |
| 57 | 31211180/3 | Հոսանքի ավտոմատ անջատիչ 32 A | հատ | 2 | *1300* | 2600 | 32A |
| 58 | 31211180/4 | Հոսանքի ավտոմատ անջատիչ 50 A | հատ | 2 | *1500* | 3000 | 50A |
| 59 | 31211180/5 | Հոսանքի ավտոմատ անջատիչ 60 A | հատ | 2 | *1600* | 3200 | 60A |
| 60 | 44511220/3 | Պայատով 15 մմ դետալներ 90 °անկյուն | հատ | 100 | *50* | 5000 | Պայատով 15 մմ դետալներ 90 °անկյուն |
| 61 | 44511220/4 | Պայատով 15 մմ դետալներ տրայնիկ | հատ | 200 | *100* | 20000 | Պայատով 15 մմ դետալներ տրայնիկ |
| 62 | 44511220/5 | Պայատով 15 մմ դետալներ կցորդ | հատ | 100 | *50* | 5000 | Պայատով 15 մմ դետալներ կցորդ |
| 63 | 44511220/6 | Պայատով 15 մմ դետալներ մի կողմը երկաթե որց | հատ | 20 | *400* | 8000 | Պայատով 15 մմ դետալներ մի կողմը երկաթե որց |
| 64 | 44511220/7 | Պայատով 15 մմ դետալներ մի | հատ | 20 | *350* | 7000 | Պայատով 15 մմ դետալներ մի կողմը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կողմը երկաթե էզ | | | | | երկաթե էզ |
| 65 | 44511220/8 | Պայատով 15 մմ դետալներ մի կողմը մետաղապլաստ էզ | հատ | 10 | *400* | **4000** | Պայատով 15 մմ դետալներ մի կողմը մետաղապլաստ էզ |
| 66 | 42131470/1 | Պայատով 15 մմ դետալներ վինտիլ | հատ | 10 | *900* | **9000** | Պայատով 15 մմ դետալներ վինտիլ |
| 67 | 44112760/2 | Պայատով 15 մմ խողովակ սառը ջրի | մետր | 150 | *250* | **37500** | Պայատով 15 մմ խողովակ սառը ջրի |
| 68 | 44112760/3 | Պայատով 15 մմ խողովակ տաք ջրի | մետր | 20 | *400* | **8000** | Պայատով 15 մմ խողովակ տաք ջրի |
| 69 | 18931220/1 | Գործիքների պայուսակ մեծ /պլաստամսե/ | հատ | 1 | *5000* | **5000** | մեծ /պլաստամսե/ |
| 70 | 18931220/2 | Գործիքների պայուսակ փոքր /պլաստամսե/ | հատ | 1 | *2400* | **2400** | փոքր /պլաստամսե/ |
| Ընդամենը յոթ հարյուր տասնինը հազար չորս հարյուր հիսուն ՀՀ դրամ | | | | | | 719450 | |

**Նախատեսվում է գնել 2020 թ-ի ընթացքում: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից: Ապրանքը մատակարարվում է գնորդի կողմից ստացված պատվերից հետո 3 օրվա ընթացքում:**


**ԳՆՈՐԴ՝**

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ.0286-60685

**ՎԱՃԱՌՈՂ՝**

Ա/Ձ Արտյոմ Կարապետյան
ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Ա. Խաչատրյանի 6
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ " մ/ճ Մեղրի
Հ/Հ 16099101233900
ՀՎՀՀ 79510714
Էլ. Փոստ harsam1976@mail.ru
Հեռ. 093753500


"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ-ի տնօրեն՝ / / Լ. Վարդանյան

Ա/Ձ / / Ա. Կարապետյան

Digitally signed by VARDANYAN LUSINE
6203730057
Date: 2020.07.27 11:48:31 GMT+04:00

Digitally signed by KARAPETYAN ARTYOM
2904790225
Date: 2020.07.27 17:41:30 AMST

Հավելված 2

<<_27_>>հուլիսի 2020թ.կնքված

N«ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Անվանումը | Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին` ըստ ամիսների, այդ թվում ** | | | | | |
| | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| Գնված ապրանքի | 50% | 60% | 70% | 80% | 100% | 100% |

**ԳՆՈՐԴ՝**

“Մեղրու ՏԲԿ” ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Գործարարների 42

Բանկ “ ՎՏԲ Հայաստան Բանկ “ մ/ճ Մեղրի

Հ/Հ 16099003354200

ՀՎՀՀ 09705024

Էլ. Փոստ agarak-hosp@mail.ru

Հեռ.0286-60685

**ՎԱՃԱՌՈՂ՝**

Ա/Ձ Արտյոմ Կարապետյան

ՀՀ Սյունիքի մարզ ք. Մեղրի Ա. Խաչատրյանի 6

Բանկ “ ՎՏԲ Հայաստան Բանկ “ մ/ճ Մեղրի

Հ/Հ 16099101233900

ՀՎՀՀ 79510714

Էլ. Փոստ harsam1976@mail.ru

Հեռ. 093753500

“Մեղրու ՏԲԿ” ՓԲԸ տնօրեն / Լ. Վարդանյան /     Ա/Ձ /     / Ա. Կարապետյան

Digitally signed by VARDANYAN LUSINE 6203730057
Date: 2020.07.27 11:48:48 GMT+04:00

Digitally signed by KARAPETYAN ARTYOM 2904790225
Date: 2020.07.27 17:42:09 AMST